

<https://doi.org/10.59546/18290744-2025.1-3-147>

ՄԱՐՏԻՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
Հանրային պաշտպանի գրասենյակի մոնիթորինգի պատասխանատու,
Երևանի «Գլաժոր» համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու

MARTIN MANUKYAN

Responsible for monitoring the work of the
Office of the Public Defender of the Chamber of Advocates of the Republic of Armenia,
Lecturer of the Department of Jurisprudence of the Yerevan University “Gladzor”,
Candidate of Legal Sciences

МАРТИН МАНУКЯН

Ответственный за мониторинг работы Аппарата Народного
Защитника Палаты адвокатов Республики Армения,
преподаватель кафедры юриспруденции Ереванского университета «Гладзор»,
кандидат юридических наук

ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

FEATURES OF THE FORMATION AND DEVELOPMENT OF NATIONAL PARLIAMENTS IN EASTERN EUROPEAN COUNTRIES

ОСОБЕННОСТИ СТАНОВЛЕНИЯ И РАЗВИТИЯ НАЦИОНАЛЬНЫХ ПАРЛАМЕНТОВ В СТРАНАХ ВОСТОЧНОЙ ЕВРОПЫ

Ներածություն

Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի մեջ մտնող երկրները սույն հոդվածում պայմանականորեն բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբում ընդգրկված են այն երկրները, որոնք նախկինում միութենական հանրապետություններ էին ԽՍՀՄ կազմում, իսկ վերջինիս անկումից հետո միավորվեցին Անկախ պետությունների համագործակցության մեջ: Դրանք են՝ Ռուսաստանը, Ուկրաինան, Բելառուսը, Մոլդովան, ինչպես նաև Եվրոպայի աշխարհագրական սահմաններից դուրս գտնվող հարավկովկասյան երկրները՝ Հայաստանը, Վրաստանը (այն դուրս եկավ ԱՊՀ կազմից 2008 թ.) և Ադրբեջանը: Եվրոպայի խորհրդի կազմում է նաև Ղազախստանը, որի տարածքի չնչին մասն է միայն Եվրոպայի աշխար-

հագրական տիրույթում:

Երկրորդ խումբը ձևավորում են Արևելյան Եվրոպայի այնպիսի երկրներ, ինչպիսիք են՝ Ալբանիան, Բուլղարիան, Հունգարիան, Լեհաստանը, Ռումինիան, Չեխիան, Սլովակիան և Հարավսլավիայի տրոհումից հետո առաջացած երկրներ՝ Բոսնիա և Հերցեգովինան, Մակեդոնիան, Սերբիան, (2008 թ. Սերբիայի կազմից դուրս գալու և անկախություն հռչակելու մասին հայտարարեց Կոսովոն, որը դեռևս մասամբ ճանաչված երկիր է), Սլովենիան, Խորվաթիան, Մոնտենեգրոն (նախկին Չեռնոգորիան): Այս խմբի մեջ, անտարակույս, մտնում են նաև Լիտվան, Լատվիան և Էստոնիան:

Հիմնական հետազոտություն

Արևելյան Եվրոպայի մեջ մտնող երկրները ոչ միայն աշխարհագրորեն են մոտ իրար, այլև հաճախ պատմական ընդհանրություններ ունեն՝ քանիցս կորցնելով իրենց ինքնուրույնությունը: Դրանցից շատերը երկար ժամանակ գտնվել են թուրքական լծի տակ (Բուլղարիա, Ռումինիա, Ալբանիա, Բոսնիա և Հերցեգովինա), որոշները եղել են Ավստրոհունգարական միապետության տիրապետության ներքո (Չեխիա, Սլովակիա, Սլովենիա, Խորվաթիա): Բալթյան հողերը զրկված էին պետական ինքնուրույնությունից և բաժանվել էին Ռուսաստանի Շվեդիայի և Լեհաստանի միջև: Լեհաստանն իր հերթին տևական ժամանակ կիսված էր Ռուսաստանի, Պրուսիայի և Ավստրիայի միջև: Այդուհանդերձ, Արևելյան Եվրոպայի այդ երկրների սահմանադրական զարգացումը սկսվել է ավելի վաղ, քան առաջին խմբի մեջ մտնող երկրները՝ Ուկրաինան, Բելառուսը և Մոլդովան:

Լեհաստանի առաջին Սահմանադրությունն ընդունվել է դեռևս 1791 թ., **այն առաջինն էր Եվրոպայում** (այն լեհ-լիտվական միացյալ Ռեչ Պոսպոլիտա պետության Սահմանադրությունն էր), Ռումինիայի առաջին Սահմանադրությունը ընդունվել է 1866 թ., **Բուլղարիայի** առաջին Սահմանադրությունը՝ 1879-ին: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին տեղի ունեցած իրադարձություններին հաջորդեցին 1918 թ. Ավստրո-Հունգարիայի անկումը, որի հետևանքով առաջացան մի շարք անկախ պետություններ: Սլովենիան ու Խորվաթիան Սերբիայի հովանու ներքո ձևավորեցին սերբերի, խորվաթների և սլովենիացիների միասնական թագավորությունը, որն ավելի ուշ կոչվեց Հարավսլավիա: Միջպատերազմյան շրջանում այս խմբի գրեթե բոլոր երկրները կամ ընդունեցին նոր սահմանադրություններ, կամ բարեփոխեցին հիները:

Ընդ որում, առաջին հինգ տարում նրանց սահմանադրական օրենսդրությունը միանգամայն ժողովրդավարական բնույթի էր (օրինակ՝ **Չեխոսլովակիայում** ընդունվեց ժամանակավոր Սահմանադրություն, նախ՝ 1918 թ. և հաջորդը՝ 1920թ, Լեհաստանում՝ փոքր Սահմանադրությունը՝ 1919 թ. և Սահմանադրությունը՝ 1920թ , **Լատվիայում և Լիտվայում**՝ ժամանակավոր սահմանադրությունները՝ 1920 թ. և Սահմանադրությունը՝ 1922 թ. և այլն): Տարածաշրջանի առանձին երկրներում որոշ ժամանակ գործում էին խորհրդային տիպի սահմանադրություններ (օրինակ՝ **Լատվիայի** կամ **Հունգարիայի** 1919 թ. սահմանադրությունները): Սակայն այդ երկրների ինքնուրույն ժողովրդավարական զարգացումն ընդհատվեց Եվրոպայում ավտորիտար ու ամբողջատիրական միտումների աճով և արդյունքում ծագած երկրորդ համաշխարհային պատերազմով: Ավտորիտար հիմնական օրենքների օրինակներ կարող են ծառայել **Ալբանիայի** (1928 թ.), **Լեհաստանի** (1935 թ.), **Ռումինիայի** (1938 թ.) միապետական

¹ Sбu Всемирная история: Канун Первой мировой войны/ А.Н. Бадак, И.Е. Войнич, Н. М. Волчек и др., Мн Харвест, М., АСТ, 2000. с. 130. Воцелка К., История Австрии. Культура, общество, политика. М., 2007, с. 470

սահմանադրությունները:

Այդ երկրներում նացիզմից ու ֆաշիզմից ազատագրվելու ընթացքում, որում վճռորոշ դեր ունեցավ Խորհրդային Միությունը, և Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո սկսեցին ձևավորվել կոմունիստական ավտորիտար-ամբողջատիրական վարչակարգեր, որոնք ուղղորդվում էին Մոսկվայի կողմից:

1989 թ. շրջադարձային տարի եղավ Արևելյան Եվրոպայի երկրների կյանքում՝ վերջ դնելով պետական սոցիալիզմի համաշխարհային համակարգին²: Նշյալ երկրներում տեղի ունեցան հակաամբողջատիրական հեղափոխություններ, որոնց ընթացքում կոմունիստական վարչակարգը տապալվեց, իսկ սոցիալիստական շինծու դաշնային կազմավորումները (**ԽՍՀՄ, Հարավսլավիայի Սոցիալիստական Դաշնային Հանրապետություն, Չեխոսլովակիայի Սոցիալիստական Հանրապետություն**), շուտով փլուզվեցին: Ընդունվեցին նոր, ժողովրդավարական սահմանադրություններ (1990 թ. **Խորվաթիայի Սահմանադրությունը**, 1991 թ.՝ **Բուլղարիայի, Մակեդոնիայի, Ռումինիայի, Սլովենիայի սահմանադրությունները**, 1992 թ.՝ **Լեհաստանի փոքր Սահմանադրությունը**, **Լիտվայի, Սլովակիայի, Չեխիայի, Էստոնիայի** սահմանադրությունները): **Հունգարիայում** 1989-1990 թթ. ընդունվեց նոր խմբագրմամբ Սահմանադրությունը, իսկ **Լատվիայում** վերականգնվեց 1922 թ. մինչպատերազմյան ժողովրդավարական Սահմանադրության գործողությունը: Վերոթվարկյալ բոլոր սահմանադրությունները (**բացի Լեհականից**) ներկայում գործում են՝ փոփոխություններով ու լրացումներով հանդերձ: Ամենաուշը ընդունվեցին **Բոսնիա և Հերցեգովինայի** (1995 թ.), **Լեհաստանի** (1997 թ.) և **Ալբանիայի** (1998 թ.) սահմանադրությունները: Հենց թվարկված սահմանադրություններն էլ իրավական հիմք դարձան և այժմ էլ այդպիսին են Արևելյան Եվրոպայի երկրներում ժողովրդավարական, իրավական, սոցիալական ուղղվածության շուկայական տնտեսությամբ պետություն կառուցելու համար: Ներկայում ընդունված է այդ երկրներն անվանել «անցումային» կամ «երիտասարդ ժողովրդավարություններ»:³ Ինքը, ժողովրդավարությունը, մեր կարծիքով, ամենից առաջ պետության իրավաքաղաքական կառուցվածքի առանձնահատուկ ձև է, քաղաքական ռեժիմի տիպ: Այդ տիպը մշակվել է այն արևմտյան հասարակությունների կողմից, որոնք ունակ են արագ ընկալելու և յուրացնելու իրենց փոխակերպող ներքին և արտաքին ազդակները, ժողովրդավարական գործընթացի մեջ օրգանապես ներառվելու, կոնֆլիկտների կանխարգելման, ինչպես նաև դրանց օգտագործման մեխանիզմները:

Նախկին սոցիալիստական պետություններն իրենց սահմանադրությունները կառուցել են արդեն գործող արևմտյան սահմանադրությունների հնագույն և դրանցում ակնհայտորեն երևում են փոխառնված դրույթները³: Ինչպես կտեսնենք Արևելյան Եվրոպայի երկրների սահմանադրությունների տեքստերի հետագա վերլուծության մեջ, դրանց վրա առավել շատ ազդել են մայրցամաքային իրավունքի համակարգ ունեցող զարգացած երկրները՝ **Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան**: Օրինակ՝ գերմանական պետական իրավունքից փոխառվել են այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են կառուցողական անվստահության քվեն և Նախագահի իրավաբանական պատասխանատվության մոդելը: **Ֆրանսիական** սահմանադրական իրավունքը չափազանց ակնհայտ ազդեցություն է գործել **Ռումինիայի** հիմնական օրենքի վրա՝ «ավանդական ֆրանկոֆոնիայի արդյունքում, որն արդեն հարյուր հիսուն տարեկան է»:³ **Իտալական** ազդեցությունը զգալի է **Սլովենիայի** սահմանադրության մի շարք դրույթների վրա, **ամերիկյան** ներկայությունը զգալի է **Բոսնիայի և Հերցեգովինայի** Սահմանադրության

² Տե՛ս *Տրաշուն Բ.Ա.*, Конституционное перемены в Восточной Европе 1989-1990. М., 1991, с. 3.

³ Տե՛ս *Маклаков В.В.*, Введение // Конституции зарубежных государств. Великобритания, Франция, Германия, Италия, Европейский союз, США, Япония, Индия: Учеб пособие. М., 2007, с. IV.

բազմաթիվ դրույթներում:

Միաժամանակ Արևելյան Եվրոպայի երկրները սահմանադրություններ մշակելիս հենվել են նաև սեփական սահմանադրական փորձի վրա, որին այդ երկրներում վերաբերվում են մեծ հարգանքով, թեկուզ և խոստովանում են, որ դա այնքան էլ հաջող փուլ չի եղել⁴:

Չեխիայի գործող Սահմանադրությունում դրույթները հարաբերականորեն քիչ են, սակայն 1920 թ. Չեխոսլովակիայի Սահմանադրությունը, որն անկասկած նրա համար օրինակ է ծառայել, մշակվել է ավստրիական պետական իրավունքի ուժեղ ազդեցությամբ:

Նախքան Արևելյան Եվրոպայի երկրների խորհրդարանների իրավական կարգավիճակի քննությանն անցնելը, հարկավոր է մատնանշել նրանց սահմանադրությունների ընդհանուր առանձնահատկությունները, որոնք ազդում են նաև ներկայացուցչական մարմինների գործունեության վրա: Նախևառաջ դա **սահմանադրությունների ընդգծված ժողովրդավարական և հակամբողջատիրական բնույթն է**: Դրանք հաստատում են իրենց հավատարմությունը քաղաքական բազմակարծությանն ու իշխանությունների բաժանմանը, ընդ որում՝ հաշվի առնելով կոմունիստական կառավարման ժամանակաշրջանում ձեռք բերված բացասական փորձը: **Նշյալ սահմանադրությունների երկրորդ առանձնահատկությունը ազգային պետականության հարցի նկատմամբ հատուկ ուշադրությունն է**:

Կարևորվում է նաև իշխանության լեգիտիմության պահպանման խնդիրը: Իշխանության լեգիտիմության պահպանման համար խիստ կարևոր է համաձայնությունն իշխանության և քաղաքացիական հասարակության միջև՝ այն նպատակների առնչությամբ, որոնց կենսագործման համար կատարվում են այս կամ այն, թեկուզ և քաղաքացիների կողմից հավանության չարժանացած գործողությունները: Հատուկ շեշտենք, որ համաձայնությունն այն նպատակների հետ, որոնց ձգտում է հասնել ժողովրդավարական իշխանությունը, նշանակում է բնակչության ճնշող մասի, թեկուզ և մասնակի նույնականացում բուն իշխանության գլխավոր ուղեգծի հետ: Քանի որ լիարժեք ժողովրդավարական պետությունը շահագրգռված է, որպեսզի քաղաքացիները դառնան նույնական ազգային պետության և նրա քաղաքականության հետ, համարեն, որ պետությունն ու իշխանությունն արտահայտում են հենց ժողովրդի առաջնային շահերը:

Ներկայում Արևելյան Եվրոպայի մեկ տասնյակ երկրներ Եվրոպական միության անդամներ են: Ընդ որում՝ ԵՄ անդամ դառնալու փաստացի նախապատրաստությունը սկսվեց այդ երկրներում կոմունիստական վարչակարգի տապալմանը գրեթե համընթաց: 1989 թ. դեկտեմբերին ԵՄ-ի ղեկավարությունը հավանություն տվեց Հունգարիային և Լեհաստանին տնտեսական օժանդակություն ցուցաբերելու ծրագրին (PHARE)⁵, ինչը հետագայում կիրառվեց նաև մյուս Արևելաեվրոպական երկրներում: 1991 թ. մեկնարկեց ԵՄ-ի հետ միավորվելու պայմանագրեր կնքելու վերաբերյալ նախկին սոցիալիստական երկրների կողմից դիմումներ ներկայացնելու պաշտոնական գործընթացը⁶: Տնտեսական գործոններից բացի՝ հավակնորդ երկրները պետք է բավարարեին նաև քաղաքական-իրավական պահանջները՝ հավաստելով հարգանքը ժողովրդավարական սկզբունքների, իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և փոքրամասնության պաշտպանության նկատմամբ: Ինչպես նաև ի զորու լինեն կատարել ԵՄ-ի անդամակցությունից բխող պարտավորությունները՝ ներառյալ Եվրամիու-

⁴ Sѓu *Светлорусова Л.М.*, Развитие парламентаризма в Болгарии (Обзор) // Процессы демократизации в Восточной Европе: Ожидания и реальность: Сб.обзоров и реф./РАИ ИНИОН>Отв.редактор Игрицкий Ю. И., М., 2002. с. 25.

⁵ Sѓu *Mc Cormik J.*, Understanding the European Union: aconcise introduction 2002, p. 212.

⁶ Sѓu *Штадтмюллер Е.*, Проблемы и перспективы развития Европейского союза. Польша и ЕС//Европейский союз на рубеже веков /ПАН.ИНИОН. М., 2000, с. 201.

թյան ազգային իրավական համակարգին ինտեգրվելը: Ներկայում ԵՄ-ի ազդեցությունն անդամ երկրների վրա շատ ուժեղ է: Օրինակ՝ այդ երկրներում սոցիալ-տնտեսական ոլորտում (տրանսպորտ, կրթություն, ֆինանսներ, առողջապահություն, տրանսպորտ, կրթություն, արդյունաբերություն) որոշումների չորս հինգերորդը կայացվում է եվրոպական նորմերի վրա: Այդ ազդեցությունը շարունակ աճում է՝ ընդգրկելով նաև ազգային խորհրդարաններ:

Իսկույն կարելի է նկատել, որ տվյալ խմբի երկրներին բնորոշ է խորհրդարանների նշանակալի դերը պետական իշխանության բարձրագույն մարմինների համակարգում: Դրանց մեջ չկան նախագահական հանրապետություններ: Դրանք կամ մաքուր խորհրդարանական երկրներ են **Ալբանիան, Հունգարիան, Լատվիան, Չեխիան, Էստոնիան**, կամ հանրապետություններ են, որոնցում երկրի նախագահն ընտրվում է բնակչության կողմից, սակայն կառավարությունը ձևավորվում է խորհրդարանի վճռորոշ ազդեցությամբ և քաղաքական պատասխանատվություն է կրում նրա առջև: Հետազոտողները նկատելով խառը հանրապետության տարբեր այդ երկրներում (նախագահի ուղղակի ընտրություն), սովորաբար խոստովանում են, որ իշխանությունը փաստացի «գործառում է խորհրդարանական համակարգով» (**Լեհաստան**), «պառլամենտարիզմի տարրերի գերակշռությամբ» (**Լիտվա**), կամ անմիջականորեն դասում են դրանք խորհրդարանական հանրապետությունների շարքին (**Ռումինիա⁷, Բոսնիա և Հերցեգովինա⁸**): Այս տեսանկյունից կարելի է խոսել Արևելյան Եվրոպայի երկրների՝ «իշխանությունների բաժանման եվրոպական մոդելին» հակվածության մասին, որի պարագայում գործադիր իշխանությունն անմիջականորեն կախված է օրենսդիր (ներկայացուցչական) մարմնի աջակցությունից:

Ձևական-իրավական առումով խորհրդարանի գերակայությունն Արևելյան Եվրոպայի երկրներում դրսևորվում է նույնիսկ սահմանադրությունների բաժինների կառուցվածքային դասավորության մեջ: Բոլոր այդ երկրներում պետական իշխանության բարձրագույն մարմինների կանոնակարգումը սկսվում է խորհրդարանից, որին հաջորդում են Նախագահին, ապա կառավարությանը վերաբերող դրույթները: **Ռումինիայի** Սահմանադրությունում (Ֆրանսիայի օրինակով), կա նաև բաժին խորհրդարանի և կառավարության հարաբերությունների վերաբերյալ: **Լատվիական և Էստոնական** սահմանադրություններում տեղ է գտել «Օրենսդրություն» բաժինը:

Արևելյան Եվրոպայի երկրների սահմանադրությունները սահմանում են խորհրդարանի ընդհանուր գործառույթը բարձրագույն պետական մարմինների համակարգում՝ օրենսդիր իշխանության իրականացումը՝ հրաժարվելով ներկայացուցչական մարմինների գերակայության և լիակատար իշխանության սոցիալիստական սկզբունքից: Բացառություն կարելի է համարել **Հունգարիան**, որտեղ խորհրդարանը սահմանվում է որպես «պետական իշխանության և ժողովրդական ներկայացուցչության բարձրագույն մարմին», որն ապահովում է «հասարակության սահմանադրական կարգի պաշտպանությունը, սահմանում է նրա կազմակերպումը, զարգացումը և կառավարման պայմանները»: Նման ձևակերպումները վկայում են այն մասին, որ Հունգարիայի Սահմանադրության որոշ դրույթներ պահպանվել են նախկին սոցիալիստական փորձից: Խորհրդարանի «բարձրագույն» դիրքի մասին խոսվում է նաև **Ռումինիայի** Սահմանադրության մեջ: Բացի այդ, այնտեղ ընդգծվում է, որ դա «երկրի միակ օրենսդիր մարմինն է» (Հոդված 58): **Սլովակիայի** Սահմանադրության մեջ խորհրդա-

⁷ См. *Мойсенко М.Г.*, Вводная статья к Конституции Румынии // Конституции государств Европы. Под. общ. ред. Л.А. Окункова. М., Изд-во НОРМА. 2001. с. 60.

⁸ См. *Шрам В.П.*, Вводная статья к Конституции Боснии и Герцоговины // Конституции государств Европы. Под. общ. ред. Л.А. Окункова. М., Изд-во НОРМА. 2001. с. 429.

րանը նշվում է որպես «միակ մարմինը, որն ընդունում է Սահմանադրությունը և օրենքները» (Հոդված 72): Խորհրդարանի բացառիկ դերը մատնանշելը կարող է հետապնդել երկակի նպատակ. մի կողմից՝ բարձրացնել խորհրդարանի հեղինակությունը, մյուս կողմից՝ սահմանափակել մյուս մարմինների (գործադիր կամ տեղական ինքնակառավարման)՝ օրենքներ ընդունելու հնարավորությունը:

Խորհրդարանի ներկայացուցչական բնույթի մասին էն նշում **Հունգարիայի, Մակեդոնիայի, Ռումինիայի, Խորվաթիայի** սահմանադրությունները: Խորհրդարանի կարևորագույն գործառույթներից մեկի՝ վերահսկողության մասին հիշատակվում է միայն **Բուլղարիայի և Լեհաստանի** սահմանադրություններում: Մյուս սահմանադրություններում այդ բացը լրացվում է այն բանով, որ տեքստում նրանք պարտադիր նախատեսում են խորհրդարանական վերահսկողության զանազան ձևեր: Մի շարք սահմանադրություններ (**Ալբանիա, Բոսնիա և Հերցեգովինա, Լատվիա, Լիտվա, Սլովենիա**) որևէ կերպ չեն նշում խորհրդարանի գործառույթները: Սակայն վերլուծության առարկա սահմանադրությունների գերակշիռ մասում թվարկվում են խորհրդարանական լիազորությունները:

Խորհրդարանի գլխավոր լիազորությունները օրենսդրական բնույթի են: Այդ խմբի երկրներին բնորոշ է խորհրդարանի օրենսդրական իրավասության միանգամայն անսահմանափակ ոլորտը: **Ոչ մի սահմանադրություն չի թվարկում այն հարցերը, որոնց վերաբերյալ խորհրդարանը իրավասու է ընդունել որոշումներ: Դա հաստատում է խորհրդարանի ինքնուրույն դերը պետական իշխանության բարձրագույն մարմինների շարքում:** Ինչ վերաբերում է օրենքների հատուկ կատեգորիաներին, ապա պետք է նշել, որ քննարկվող տասնչորս սահմանադրություններից միայն հինգում են հիշատակվում սահմանադրական օրենքներ (**Լիտվա, Մակեդոնիա, Ռումինիա, Սլովակիա և Չեխիա**), իսկ օրգանական օրենքներ՝ միայն **Մակեդոնիայի և Խորվաթիայի** սահմանադրություններում: Որոշ երկրներում (օրինակ՝ **Ալբանիայում, Հունգարիայում, Մակեդոնիայում, Էստոնիայում**) գոյություն ունեն օրենքների կատեգորիաներ, որոնք ընդունելու համար անհրաժեշտ են առավելագույն թվով ձայներ, սակայն դրանց համար որևէ հատուկ անվանում մտցված չէ:

Արևելյան Եվրոպայի երկրների մյուս ընդհանուր գիծը կարելի է համարել նրանց զգուշավոր վերաբերմունքը օրենսդրական լիազորությունների պատվիրակմանը: Սահմանադրությունների մեծ մասում այն թույլատրվում է միայն ծայրահեղ, բացառիկ իրադրություններում, երբ արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում անհրաժեշտ է անհապաղ կարգավորել հասարակական հարաբերությունների ինչ-որ տեսակ՝ այդ դեպքում Նախագահը կամ կառավարությունն իրավունք ունեն ընդունելու ակտեր, որոնք օրենքի ուժ ունեն, պարտադիր արժանանալով խորհրդարանի հավանությանը օրինակ՝ **Հունգարիայում, Լատվիայում, Մակեդոնիայում, Լեհաստանում**): Իսկ սովորական պայմաններում օրենսդրությունը պատվիրակել հնարավոր է միայն՝ ըստ **Ռումինիայի** Սահմանադրության (հատուկ իրավական ակտեր կարող են ընդունվել այն ոլորտներում, որոնք օրգանական օրենքների առարկա չեն) և **Խորվաթիայի** Սահմանադրության համաձայն, երբ խորհրդարանն իրավունք ունի պատվիրակելու օրենսդրական լիազորությունները կառավարությանը մինչև մեկ տարի ժամկետով:

Չեխիայի Սահմանադրությունը ևս ունի առանձնահատկություն, այն միակն է նշյալ խմբից, որը իրավունք է տալիս ընդունելու օրենքի ուժ ունեցող ակտեր ոչ թե կառավարությանը, այլ խորհրդարանի վերին պալատին՝ այն դեպքում, երբ ստորին պալատն արձակված է, իսկ օրենսդրական կարգավորում պահանջող հարցը անհետաձգելի է (Հոդված 33):

Եվրոպական միության ազդեցությունը նորագույն ժամանակների գործոն է: **Սլովակիայի** Սահմանադրության մեջ կատարված վերջին փոփոխություններից մեկը (Հոդված 7) հնա-

րավորություն ընձեռեց կառավարությանը այդ կազմակերպության անդամակցությանը նախապատրաստվելու ընթացքում ընդունելու որոշումներ ԵՄ-ի նորմերն ազգային իրավական համակարգ ներդնելու համար: Կառավարության նմանօրինակ ակտերը չունեն օրենքի ուժ, սակայն, ընդունելու համար պահանջում են խորհրդարանի հատուկ լիազորումը: **Չեխիայում** կառավարությունը նույն եղանակով փորձեց ամրապնդել իր իրավունքը օրենքի ուժ ունեցող ակտեր ընդունելու հարցում, բայց ապարդյուն: Արևելյան Եվրոպայի երկրների սահմանադրությունները չեն նախատեսում նաև մշտական հանձնաժողովների կամ խմբակցությունների իրավունքը խորհրդարանի փոխարեն ընդունելու օրենքներ, ինչպես նախատեսում են **Իտալիայի, Հունաստանի, Իսպանիայի** կամ **Բրազիլիայի** սահմանադրությունները:

Խորհրդարանի լիազորությունների երկրորդ խումբը ֆինանսական լիազորություններն են: Խորհրդարանի ավանդական լիազորությունը՝ ընդունելու բյուջեն և վերահսկելու դրա կատարումը, կարգավորվում է բոլոր սահմանադրությունների կողմից: Ամենալայն տնտեսական լիազորությամբ օժտված է **Հունգարիայի** խորհրդարանը, այն սահմանում է երկրի սոցիալ-տնտեսական ծրագիրը: Երեք երկրում (**Լեհաստան, Խորվաթիա Էստոնիա**) խորհրդարանը կարող է նույնիսկ արձակվել, եթե ժամանակին չընդունի բյուջեն: Սահմանադրությունների մեծ մասում ֆինանսներին նվիրված են հատուկ բաժիններ (օրինակ՝ **Լեհաստանում** և **Սլովենիայում**՝ «հանրային ֆինանսներ», **Ռումինիայում**՝ «տնտեսություն և հանրային ֆինանսներ», **Լիտվայում** և **Էստոնիայում**՝ «ֆինանսներ և պետական բյուջե և այլն»): Հասարակական հարաբերությունների նշյալ տեսակի մանրակրկիտ կարգավորումը համաշխարհային սահմանադրականության արդի միտումներից է և վկայում է զարգացած արևմտյան պետությունների, մասնավորապես **Գերմանիայի** փորձի հետ ծանոթության մասին: Սակայն, արևելաեվրոպական որոշ երկրների համար դա նաև յուրօրինակ վերադարձ է սեփական մինչսոցիալիստական անցյալին⁹: Հասարակական հարաբերությունների կարևորությունը, որ ձևավորվում են պետական բյուջեի մշակման, հաստատման և կատարման գործընթացում, պայմանավորում է դրանց կարգավորման անհրաժեշտությունը իրավական նորմերով, որոնցից գլխավորները ամրագրված են բոլոր պետությունների սահմանադրություններում¹⁰:

Այս առումով կարելի է նշել երկու մարմին (հաստատություն), որոնք հանդիպում են Արևելյան Եվրոպայի երկրների գործող սահմանադրություններում և առհասարակ բոլոր նորագույն սահմանադրություններում: Առաջինը Կենտրոնական բանկն է, երկրորդը՝ Հաշվիչ պալատը (**Բուլղարիա, Հունգարիա**), Հաշվիչ դատարանը (**Ռումինիա, Սլովենիա**), Բարձրագույն վերահսկիչ վարչությունը (**Սլովենիա, Չեխիա**), Պետական վերահսկողությունը (**մերձբալթյան հանրապետություններ**): Ընդ որում՝ սահմանադրությունները ֆինանսական վերահսկողության մարմինների կարգավիճակը կարգավորում են առավել մանրամասն, քան բանկերինը: **Լեհաստանի** Սահմանադրության մեջ Վերահսկողության բարձրագույն պալատին նվիրված է վեց հոդված (այս մարմինը հիշատակված է դեռ 1921թ. լեհական Սահմանադրության մեջ): Սահմանադրությունների մեծ մասում հաշվիչ պալատների ղեկավարությունը նշանակվում է խորհրդարանի կողմից, իսկ Կենտրոնական բանկերի ղեկավարությունը՝ խորհրդարանի և Նախագահի կողմից՝ համատեղ:

Խորհրդարանի լիազորությունների երրորդ խումբը միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի վավերացումն ու չեղարկումն է: Վերլուծվող սահմանադրություններից յուրա-

⁹ Sŭ Treŭcettenkova H. Ю., Вводная статья к Конституции Литвы // Конституции государств Европы. Под. общ. ред. Л. А. Окунькова. М., Изд-во НОРМА. 2001. с. 330.

¹⁰ Sŭ Тимошенко И. Г., Конституционная регламентация бюджетного процесса в зарубежных государствах // Очерки конституционного права иностранных государств: Учебное и научно-практическое пособие/Отв. ред. Д. А. Ковачев. М., 1999, с. 73.

քանցյուրը կարգավորում է նշյալ հարցը: Դրանց սկզբնական գլուխներում սովորաբար կա հոդված, որը ճանաչում է միջազգային պայմանագրերի գերակայությունը ներքին օրենսդրության նկատմամբ, սակայն, մի շարք նախապայմաններով, օրինակ՝ որ պայմանագիրը վավերացվի և հրապարակվի: Արտաքին քաղաքականությանը նվիրված հատուկ բաժիններ գոյություն ունեն **Ալբանիայի, Լիտվայի, Մակեդոնիայի, Խորվաթիայի և Էստոնիայի** սահմանադրություններում:

Միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի առումով այս կամ այն իրավասության օժտված են բոլոր բարձրագույն պետական մարմինները՝ պետության ղեկավարից մինչև դատարաններ: Արևելյան Եվրոպայի երկրների մեծ մասում խորհրդարանը վավերացնում է առավել կարևոր միջազգային պայմանագրերը, որոնց կատեգորիաները սահմանված են հենց սահմանադրության մեջ: Դրանք, օրինակ, այն պայմանագրերն են, որոնք նախատեսում են ընդունել օրենքը կամ փոփոխել այն, ռազմական կամ քաղաքական բնույթի պայմանագրերը, պետության ֆինանսական պարտավորությունները նախատեսող պայմանագրերը և այլն: Որոշ սահմանադրություններ միջազգային պայմանագրերը վավերացնելու լիազորությունը վերապահում են պետության ղեկավարին, ինչին խորհրդարանը տալիս է իր համաձայնությունը (օրինակ՝ **Բոսնիա և Հերցեգովինայում, Լեհաստանում, Չեխիայում**): Սահմանադրություններում առանձնակի տեղ է նվիրվում միջազգային որևէ կազմակերպության անդամակցելու դեպքում ազգային իրավասության իրականացման իրավունքի մի մասը նրան փոխանցելու հարցին. նման միջազգային պայմանագիրը վավերացնելու համար պահանջվում է հանրաքվե (այսպես եղավ արևելաեվրոպական բոլոր երկրներում ԵՄ-ին անդամակցելիս);

Խորհրդարանի լիազորությունների չորրորդ խումբը հանրաքվե նշանակելու լիազորությունն է: Արևելյան Եվրոպայի բոլոր երկրների սահմանադրությունները նախատեսում են ուղղակի ժողովրդավարության այդ կարևոր ձևը: Հաճախ հանրաքվեով կարելի է փոփոխություններ կատարել սահմանադրության մեջ: **Սլովակիայի** Հիմնական օրենքում հանրաքվեին նվիրված էր ութ հոդված (հոդվածներ 93-100): Վերլուծության առարկա երկրների մեծ մասում համազգային հանրաքվեն նշանակվում է խորհրդարանի և Նախագահի կողմից համատեղ: Այսպես, **Բուլղարիայում** խորհրդարանը որոշում է կայացնում ազգային հանրաքվե անցկացնելու մասին (Հոդված 84), իսկ Նախագահը՝ նշանակում է ժամկետը (Հոդված 98), **Լեհաստանում** համապետական հանրաքվե նշանակելու իրավունք ունի Սեյմը, կամ Նախագահը՝ Սենատի համաձայնությամբ (Հոդված 125): Հինգ երկրներում (**Հունգարիա, Լիտվա, Մակեդոնիա, Սլովենիա, Էստոնիա**) դա խորհրդարանի առանձնաշնորհն է; Այս համապատկերում բացառություն է **Չեխիան**, որի Սահմանադրության մեջ հանրաքվեն տևական ժամանակ առհասարակ ամրագրված չէր: 2001 թ., այնտեղ ներառվեցին դրույթներ միջազգային որևէ կազմակերպության անդամակցության հարցով հանրաքվե անցկացնելու հնարավորության մասին: 2002թ. լրացումներով երկրի Նախագահին հնարավորություն տրվեց «հայտարարելու հանրաքվե Չեխիայի Հանրապետության ԵՄ-ին անդամակցության և դրա արդյունքների վերաբերյալ»: Ներկայումս հանրաքվեի մասին ոչինչ չի ասվում միայն **Բոսնիա և Հերցեգովինայի** Սահմանադրությունում: Թերևս դա ճիշտ է, քանի որ էթնիկ հակամարտության պայմաններում նշյալ ինստիտուտը կարող է միայն սրել իրադրությունը:

Խորհրդարանի լիազորությունների հինգերորդ խումբը տարբեր մարմինների ձևավորման ու պաշտոնատար անձանց նշանակմանը մասնակցելու լիազորությունն է: Հարկ է նշել, որ որոշ երկրներում (**Ալբանիա, Էստոնիա, Լիտվա, Հունգարիա և Չեխիա**) խորհրդարանն է ընտրում երկրի ղեկավարին, մյուս դեպքերում այն նշանակում է Նախագահի ընտրություններ: Ի տարբերություն Գերմանիայի կամ Իտալիայի՝ երկրամասերի ներկայացուցիչները չեն

մասնակցում խորհրդարանի կողմից անցկացվող նախագահական ընտրություններին, բացառությամբ **Էստոնիայի**:

Արդեն նշել ենք, որ Արևելյան Եվրոպայի երկրներում կառավարությունը ցանկացած դեպքում պետք է վայելի խորհրդարանական մեծամասնության աջակցությունը: Համապատասխանաբար, սահմանադրությունները սահմանում են, որ կառավարությունը ձևավորվում է յուրաքանչյուր խորհրդարանական ընտրություններից հետո՝ համաձայն դրա արդյունքների: Չնայած խորհրդարանի առաջատար դերին, այդ գործընթացում, խորհրդարանի և Նախագահի կոնկրետ լիազորությունները կարող են տարբերվել: Ելնելով դրանից՝ առանձնացնենք արևելաեվրոպական երկրներում կառավարության ձևավորման երեք հիմնական մոդելներ:

Առաջին մոդելը պայմանականորեն կարելի է անվանել «Նախագահին առաջարկում է խորհրդարանը նշանակում է»: Այն բնորոշ է **Բուլղարիային, Մակեդոնիային և Սլովենիային**: Այսպես, համաձայն Սլովենիայի Սահմանադրության 111 հոդվածի, հանրապետության Նախագահը խորհրդարանական խմբակցությունների ղեկավարների հետ խորհրդակցելուց հետո առաջարկում է խորհրդարանին կառավարության ղեկավարի թեկնածությունը: Խորհրդարանն ընտրում է կառավարության ղեկավարին և նրա առաջարկությամբ նշանակում կառավարության մյուս անդամներին: Կառավարությունը երգվում է խորհրդարանի առջև: Արևելյան Եվրոպայի երկրներում պետության ամենաբարձր ներկայացուցչական մարմնի կողմից կառավարության անդամներին նշանակելը պայմանավորված է այն բանով, որ տակավին մինչև վերջերս այնտեղ գոյություն չունեին նախագահի ինստիտուտը: Այն լիազորությունները, որոնք ունեն պետության ղեկավարը Արևմտյան Եվրոպայի երկրներում, վերոնշյալ երկրներում բաշխված էին պետական խորհրդի և բարձրագույն ներկայացուցչական մարմնի միջև: Արդյունքում, երբ Արևելյան Եվրոպայի երկրներից շատերում սահմանվեց Նախագահի պաշտոնը, սկսեց ձևավորվել պետական իշխանության մի կառուցվածք, որը շատ կողմերով չէր համընկնում ավանդական խորհրդարանական ժողովրդավարությամբ երկրների պետական իշխանության կառուցվածքին:

Սակայն Արևելյան Եվրոպայի երկրների գերակշիռ մասում կառավարությունը նշանակելու լիազորությունները այնուամենայնիվ, գտնվում են պետության ղեկավարի ձեռքում, իսկ ներկայացուցչական մարմինը վստահություն է հայտնում (կամ չի հայտնում) կառավարության այդ կազմին: Ուստի, դիտարկենք Արևելյան Եվրոպայի երկրներում կառավարություն ձևավորելու **երկրորդ մոդելը**:

Այն կարելի է պայմանականորեն ձևակերպել հետևյալ կերպ՝ «Նախագահին առաջարկում է-խորհրդարանը վստահություն է հայտնում- Նախագահը նշանակում է»: Որպես օրինակ կարելի է նշել **Էստոնիան, Խորվաթիան և Ռումինիան**: Այսպես, համաձայն **Ռումինիայի** Սահմանադրության 102-103 հոդվածների՝ Նախագահը վարչապետի պաշտոնում թեկնածություն է առաջադրում խորհրդարանական կուսակցությունների հետ խորհրդակցելուց հետո: Թեկնածուն տասնօրյա ժամկետում խորհրդարան է ներկայացնում ծրագիր և կառավարության ամբողջ կազմը՝ վստահության արժանանալու համար: Խորհրդարանից ստացած վստահության քվեի հիման վրա՝ Նախագահը նշանակում է կառավարությունը: Կառավարությունը երգում է տալիս Նախագահին:

Երրորդ մոդելը կարելի է ձևակերպել այսպես՝ «Նախագահը նշանակում է – խորհրդարանը վստահություն է հայտնում»: Այն կիրառվում է **Բոսնիա և Հերցեգովինայում, Սլովակիայում, Չեխիայում և Լեհաստանում**, արևմտյան երկրներից՝ **Իտալիայում**: Այսպես, համաձայն Սլովակիայի Սահմանադրության 110-113 հոդվածների, երկրի Նախագահը նշանակում է կառավարության ղեկավարին և վերջինիս առաջարկությամբ՝ կառավարության մյուս անդամ-

ներին: Նշանակումից հետո 30-օրյա ժամկետում կառավարությունը պետք է խորհրդարան ներկայացնի իր գործունեության ծրագիրը՝ վստահության արժանանալու համար: Կառավարությունը երդում է տալիս Նախագահին: Նման կարգը հաճախ է արժանանում քննադատության, քանի որ այդ երկրների սահմանադրությունները ֆորմալ առումով Նախագահին չեն պարտադրում՝ հաշվի առնելու խորհրդարանի կուսակցական կազմը, իսկ նրա նշանակած անձանց որոշակի ժամկետով հասանելի են դառնում կարևորագույն, այդ թվում և գաղտնի պետական փաստաթղթերը:

Հետաքրքիր է համեմատել խորհրդարանի լիազորությունները դատական մարմինները ձևավորելիս: Ինչպես հայտնի է՝ սոցիալիստական ժամանակաշրջանում դատավորներին նշանակում էր (և փոխում) բարձրագույն ներկայացուցչական մարմինը: Ներկայում Արևելյան-Եվրոպայի երկրների մեծ մասում դատավորներ նշանակելու իրավունքը պատկանում է պետության ղեկավարին: Խորհրդարանը դատավորներ է ընտրում միայն **Լատվիայում**, **Մակեդոնիայում** և **Սլովենիայում**: Սակայն, բարձր ատյանի դատարանի դատավորներ, այդ թվում և Սահմանադրական դատարանի անդամներ նշանակելու գործընթացին սովորաբար մասնակցում են և խորհրդարանը, և նախագահը: Բացի դրանից **Ֆրանսիայի**, **Իսպանիայի** և **Իտալիայի** օրինակով արևելաեվրոպական երկրների սահմանադրությունները նախատեսում են ստեղծել դատական հանրակցության բարձրագույն մարմիններ, որոնք հաճախ անվանվում են Դատական խորհուրդներ: **Բուլղարիայում** և **Խորվաթիայում** նշյալ մարմինները նշանակում են դատավորներին: Ուշագրավ է, որ խորհրդարանը պարտադիր մասնակցում է այդ մարմինների ձևավորմանը՝ Նախագահի և դատավորների հետ միասին:

Զարգացած երկրները փորձն ազդել է նաև այսպիսի ինստիտուտի ձևավորման վրա, ինչպիսին Մարդու իրավունքների հանձնակատարն է (**Օմբուդսմեն**), որին ընտրում է խորհրդարանը: **Հունգարիայում** բացի մարդու իրավունքների հանձնակատարի պաշտոնից հիմնվել է նաև ազգային և էթնիկ փոքրամասնությունների իրավունքների հանձնակատարի պաշտոն, մի շարք երկրներում գործում են նաև երեխաների իրավունքների հանձնակատարներ: Վերջապես, ժամանակաշրջանի բնորոշ գծերից է այն, որ արևելաեվրոպական որոշ սահմանադրություններ կանոնակարգում են այնպիսի մարմինների կարգավիճակը, ինչպիսիք են ռադիոյի և հեռուստատեսության համալեռնական խորհուրդը կամ **Ռումինիայի** տեղեկատվական ծառայությունը: Միանգամայն տրամաբանական է, որ այդ մարմինները ձևավորվում են Նախագահի և խորհրդարանի հետ համատեղ (համապատասխանաբար՝ Հոդված 214 և Հոդված 62):

Խորհրդարանի լիազորությունների **վեցերորդ խումբը** քաղաքական և իրավաբանական վերահսկողությունն է պետական մարմինների և պաշտոնատար անձանց, առաջին հերթին՝ կառավարության և պետության ղեկավարի նկատմամբ: Արևելյան Եվրոպայի երկրների սահմանադրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցում ամրագրվել են խորհրդարանական համակարգի կայուն սկզբունքներից մեկը՝ խորհրդարանի առջև կառավարության պատասխանատվության սկզբունքը: Միակ բացառությունը, երբ սահմանադրությունը նախատեսում է կառավարության պատասխանատվությունը ոչ միայն խորհրդարանի, այլև Նախագահին առջև, **Լիտվայի Սահմանադրությունն է**, որում ամրագրված է, որ նախարարները պատասխանատվություն են կրում Սեյմի և Նախագահի առջև, և որ կառավարությունը վայր է դնում լիազորությունները Սեյմի կամ Նախագահի ընտրություններից հետո (Հոդվածներ՝ 92, 96):

Գերմանիայի Սահմանադրության օրինակով որոշ երկրներ ներառեցին կառուցողական վստահության քվեն, որը թույլատրում է հեռացնել կառավարության գործող ղեկավարին (նրա

հետ նաև կառավարության ամբողջ կազմին) միայն խորհրդարանի կողմից կառավարության նոր ղեկավար ընտրվելու դեպքում (**Ալբանիա, Հունգարիա, Լեհաստան Սլովենիա**): Մյուս երկրները, թեպետ և կիրառում են ավանդական վստահության քվեն, սակայն զգալիորեն բարդացրել են խորհրդարանի կողմից անվստահություն հայտնելը: Օրինակ՝ Բուլղարիայի Սահմանադրությունը սահմանել է, որ կառավարությանը անվստահություն հայտնելու վերաբերյալ առաջարկություն կարող է ներկայացնել միայն խորհրդարանի պատգամավորների մեկ հինգերորդ մասը, այն ընդունելու համար անհրաժեշտ են պատգամավորների կեսից ավելի ձայները:

Բացի խորհրդարանի առջև կառավարության համերաշխ քաղաքական պատասխանատվությունից, քննարկվող սահմանադրությունների մեծ մասում նախատեսված է **կառավարության անդամների անձնական պատասխանատվություն**: Դրա առկայությունն ուժեղացնում է խորհրդարանի վերահսկողությունը, պաշտպանում է կառավարությանը որպես մեկ ամբողջություն արմատական փոփոխություններից, իսկ խորհրդարանին՝ վաղաժամկետ լուծարումից: Այս առումով հետաքրքիր է **Լիտվայի** Սահմանադրության այն դրույթը, ըստ որի՝ եթե փոխարինվում է նախարարների կեսից ավելին, կառավարությունը վերստին պետք է լիազորություններ ստանա Սեյմից (Հոդված 10): Համանման դրույթ գոյություն ունի նաև Մակեդոնիայի Սահմանադրությունում (Հոդված 94):

Քննարկվող երկրների կեսում «ռացիոնալիզացված պառլամենտարիզմ» ոգով կիրառվում է կառավարության՝ խորհրդարանին ուղղված ոչ թե պարզ, այլ կապակցված հարցը: Օրինակ՝ համաձայն **Ռումինիայի** Սահմանադրության 117 հոդվածի, կառավարության ղեկավարը կարող է կառավարության վստահության հարցը կապել խորհրդարանի կողմից օրենքի կամ այլ որոշման ընդունման հետ, եթե որոշումը ընդունված չէ, համարում է, որ կառավարությանը անվստահություն է հայտնվել: Նման գործողությունների օգնությամբ կառավարությունը ճնշում է բանեցնում խորհրդարանի վրա՝ նպատակ ունենալով հասնել իրեն ձեռնտու ակտի ընդունմանը: Ավելին, երկու երկրում՝ **Սլովակիայում** և **Չեխիայում**, Նախագահն իրավունք ունի արձակելու խորհրդարանը, եթե այն երեք ամսվա ընթացքում որոշում չի կայացրել կառավարության օրինագծի վերաբերյալ, ինչի հետ կառավարությունը կապում է իրեն վստահություն հայտնելը (համապատասխանաբար, Հոդվածներ՝ 102 , 35):

Ինչ վերաբերում է խորհրդարանի առջև բարձր պաշտոնատար անձանց իրավական պատասխանատվությանը, ապա արևելաեվրոպական երկրներում խորհրդարանն իրավունք ունի առաջադրելու մեղադրանք երկրի ղեկավարին՝ առավել հաճախ սահմանադրությունը, օրենքները խախտելու կամ պետական դավաճանության համար: Ուշագրավ է, որ այդ երկրների մեծ մասն ընտրել է Նախագահի իրավական պատասխանատվության **գերմանական մոդելը**, որի դեպքում Նախագահին պաշտոնանկ անելու որոշում է կայացնում Սահմանադրական դատարանը: Բացառություն են **մերձբալթյան հանրապետությունները**, որտեղ նման որոշում կայացնելու հնարավորություն ունի խորհրդարանը, ինչպես նաև **Լեհաստանը**, որտեղ նման որոշում ընդունում է Պետական տրիբունալը, և **Ռումինիան**, որտեղ նման որոշում կայացնելու իրավունք ունի Արդարադատության գերագույն դատարանը, որը գլխավորում է ընդհանուր իրավասության դատարանների համակարգը: Բացի դրանից՝ Ռումինիայում այդ հարցով հնարավոր է անցկացնել հանրաքվե (Հոդված 95):

Հետաքրքիր է, որ **Սլովենիայում** ևս, Նախագահը կարող է պաշտոնանկ արվել ժողովրդական քվեարկությամբ՝ խորհրդարանի նախաձեռնությամբ (Հոդված 106): Սակայն այստեղ **Ավստրիայի օրինակով**՝ գոյություն ունի Նախագահի յուրատեսակ քաղաքական պատասխանատվություն, քանի որ իրավական հիմքեր նման պաշտոնանկության համար

սահմանված չեն, և եթե Նախագահը հետ չի կանչվում հանրաքվեի արդյունքներով, ապա նա ցրում է խորհրդարանը, և սկսվում է Նախագահի լիազորությունների նոր ժամկետը: **Լատվիայում** և **Լիտվայում** ևս, խորհրդարանը կարող է պաշտոնանկ անել Նախագահին առանց իրավաբանական հիմքերի (համապատասխանաբար, Հոդվածներ՝ 51,87): Կառավարության անդամներն իրավական պատասխանատվություն են կրում խորհրդարանի առջև մի շարք երկրներում (օրինակ՝ **Լեհաստանում**, **Ռումինիայում**, **Սլովենիայում**), որոնց ընթացակարգը նման է նախագահների պատասխանատվությանը: Վերջապես, որոշ երկրներում խորհրդարանի իրավասության մեջ է մտնում բարձրագույն դատարանների դատավորների նկատմամբ քրեական հետապնդում սկսելու վերաբերյալ համաձայնություն տալը (օրինակ՝ **Ալբանիայում**, **Չեխիայում**, **Էստոնիայում**):

Արևելյան Եվրոպայի երկրներում խորհրդարանին է պատկանում պատերազմ հայտարարելու և խաղաղություն կնքելու իրավունքը: Նրա համաձայնությունը պահանջվում է զինված ուժերը երկիր սահմաններից դուրս ուղարկելու և օտարերկրյա զինված ուժեր երկիր տարածքում ընդունելիս, ինչպես նաև ռազմական (արտակարգ) դրություն մտցնելիս և դրա ժամկետները երկարաձգելիս, սակայն, հիմնական դերը այդ գործողություններում խաղում են երկրի ղեկավարն ու կառավարությունը: Ներկայումս գրեթե բոլոր արևելաեվրոպական երկրները անդամակցում են ՆԱՏՕ-ին. 1990-ից՝ Հունգարիան, Լեհաստանը, Չեխիան, 2004-ից՝ Բուլղարիան, Լատվիան, Լիտվան, Ռումինիան, Սլովակիան, Էստոնիան, 2009-ին դաշինքին անդամագրվել է Ալբանիան, Խորվաթիան, 2017-ին՝ Մոնտենեգրոն: Նրանց սահմանադրություններում հիշատակվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ մարդասիրական օգնությունը, խաղաղ դիտորդական առաքելությունները, զորավարժությունները, փոխադարձ հավաքական անվտանգության կազմակերպումը, միջազգային պաշտպանական կազմակերպությունները:

Արևելաեվրոպական խորհրդարանները և՛ միապալատ են և՛ երկպալատ: Միապալատ խորհրդարանները գրեթե կրկնակի ավել են, քան երկպալատները: Երկպալատ են միայն **Բոսնիա** և **Հերցեգովինայի**, **Լեհաստանի**, **Ռումինիայի**, **Սլովենիայի** և **Չեխիայի** խորհրդարանները: Խորվաթիայում վերին պալատը լուծարվեց 2001թ: Խորհրդարանի այս կամ այն կառուցվածքի ընտրությունը, նախ. բացատրվում է միասնական տարածքային կառուցակարգով (միայն Բոսնիա և Հերցեգովինան է դաշնային պետություն), և երկրորդ՝ ազգային ավանդույթով, ընդ որում՝ մինչսոցիալիստական շրջանի: Օրինակ՝ **Բուլղարիայում** դեռևս 1879 թ. Տինովյան սահմանադրության համաձայն խորհրդարանը ուներ մեկ պալատ և կոչվում էր Ժողովրդական ժողով, հրավիրվում էր կարևորագույն հարցեր վճռելու համար, օրինակ՝ Սահմանադրություն ընդունելու համար ընտրվեց Ժողովրդական մեծ ժողովը, նույնը նախատեսվում է նաև գործող Սահմանադրությամբ: Դեռևս 1791 թ. **Լեհաստանի** Սահմանադրության համաձայն՝ երկրի խորհրդարանը երկպալատ էր. 1921 թ. Սահմանադրության ընդունմամբ այն սկսեց կոչվել Ազգային ժողով՝ կազմված լինելով Սեյմից և Սենատից: Նման կառուցվածք ունի նաև ներկայիս խորհրդարանը (ներկայումս Ազգային ժողով է անվանվում պալատների համատեղ նիստը): Ինչպես տեսնում ենք երկպալատությունը լեհական խորհրդարանի կազմակերպման պատմականորեն առաջին ձևն էր և նրա հետագա զարգացման ընթացքում դարձավ լրիվ ավանդական տարր:

Հետաքրքիր կառուցվածքային յուրահատկություն ունի **Սլովենիայի** խորհրդարանը: Համաձայն Սահմանադրության՝ երկրում գործում է երկու մարմին՝ Պետական ժողովը (հենց դա է ընդունում օրենքներ) և Պետական խորհուրդը: Պետխորհրդի մեջ մտնում են գործատուների, վարձու աշխատողների, գյուղացիների, արհեստավորների և ազատ մասնագիտություն-

ների անձանց, ոչ արտադրական ոլորտի աշխատողների և տեղական շահերի ներկայացուցիչները: Նա ունի օրենսդրական նախաձեռնության իրավունք և վետոյի իրավունք Պետժողովի կողմից ընդունված օրենքների նկատմամբ, ինչպես նաև Պետխորհրդի իրավասության ներքո գտնվող հարցերի վերաբերյալ եզրակացություն տալու իրավունք և պարտավորություն (Հոդված 97): Սահմանադրությունը Պետական խորհուրդը չի անվանում խորհրդարանի պալատ (ինչպես օրինակ Գերմանիայում՝ Բունդեսրատը), բայց մասնագիտական գրականության մեջ ճանաչվում է այդպիսին¹¹: Խորհրդարանի պալատ ձևավորելու նման կարգը ունի կողմնակիցներ¹²: Մյուս կողմից՝ իր կազմով և լիազորություններով Պետխորհուրդը հիշեցնում է խորհրդակցական այնպիսի մարմիններ, ինչպիսիք են ֆրանսիական Տնտեսական և սոցիալական խորհուրդը և իտալական Տնտեսության և աշխատանքի ազգային խորհուրդը: Դա խմբային (կորպորատիվ) ներկայացուցչության տիպիկ օրինակ է: Որոշ հետազոտողների կարծիքով Արևելյան Եվրոպայի երկրները «նման ինստիտուտի մեծ պահանջարկ ունեն», քանի որ այդ երկրները մյուսներից տարբերվում են հասարակության մեջ առկա սուր հակասություններով¹³:

Քննության առարկա բոլոր խորհրդարանները և երկպալատ խորհրդարանների բոլոր պալատները (բացի Բոսնիա և Հերցեգովինայի և Սլովենիայի վերին պալատներից) ընտրվում են ուղիղ ընտրություններով: Ավելին, նրանց լիազորությունների ժամկետը չորս տարի է (այս դեպքում բացառություն են Սլովենիայի և Չեխիայի վերին պալատները): Խորհրդարանի ուղիղ ընտրակարգն ու լիազորությունների բավականին կարճ ժամկետը համարժեքորեն արտացոլում են դրանց կազմում հասարակության սոցիալ-քաղաքական կառուցվածքի փոփոխությունները: Միայն հինգ սահմանադրություններում է հիշատակվում ընտրական համակարգի տեսակը, համամասնական համակարգը՝ **Լատվիայում** (ստորին պալատը), **Չեխիայում** (ստորին պալատը), **Էստոնիայում**, մեծամասնական համակարգը՝ **Չեխիայում** (վերին պալատ), մեծամասնական-համամասնականը՝ **Ալբանիայում**: Սակայն նույնիսկ սահմանադրորեն ամրագրված լինելն էլ չի երաշխավորում այդ երկրները ընտրական օրենսդրության բազմաթիվ փոփոխություններից: Դա կարելի է համարել բոլոր անցումային ժողովրդավարությունների բնորոշ գիծը: Եթե վերլուծենք ընտրական համակարգի տեսակը, որը ավելի հաճախ է կիրառվում խորհրդարան (պալատներ) ձևավորելիս, ապա դա համամասնական ընտրակարգն է¹⁴:

Չափազանց յուրատեսակ է **Բոսնիա և Հերցեգովինայի** խորհրդարանը: Դրա պալատների ձևավորման կարգը արտացոլում է պետության ազգային և տարածքային կազմի բնութագիրը: Ստորին պալատը (Ներկայացուցիչների պալատը) ընտրվում է բնակչության կողմից ուղիղ ընտրություններով, ընդ որում՝ պատգամավորների երկու երրորդը մի սուբյեկտի տարածքից (Բոսնիա և Հերցեգովինայի Դաշնությունից) և մեկ երրորդը՝ երկրորդ սուբյեկտի՝ Սերբիայի Հանրապետության տարածքից: Նման համամասնություն է գործում նաև վերին պալատի (Ժողովուրդների պալատի) ընտրությունների ժամանակ, բայց, դրանով հանդերձ, յուրաքանչյուր հիմնական էթնիկ խմբից (խորվաթներ, բոսնիացիներ և սերբեր) պետք է ընտրվեն հավասար թվով պատգամավորներ, ընդ որում՝ անուղղակի եղանակով՝ համապետական դաշնության սուբյեկտների խորհրդարանների կողմից (Սահմանադրության 4-րդ Հոդված): Վերին պալատի դիրքերն ուժեղ են օրենքներ ընդունելիս, սակայն, այն առհասարակ չի մաս-

¹¹ Shtu Обзор конституционных новостей. Словения//КПВО, 1999, с. 173.

¹² Shtu Шамбек Г., К вопросу о значении двухпалатной парламентской системы//КПВО, 2003, с. 46.

¹³ Shtu Сравнительное избирательное право. Учебное пособие. М.: Норма, 2003, с. 23.

¹⁴ Shtu Покладок Е., Экономический и социальный свет Франции//Современная Европа, 2005, с. 59.

նակցում կառավարության ձևավորմանը և չի առնչվում վերջինիս պատասխանատվությանը (Սահմանադրության 5-րդ Հոդված):

Երկպալատ խորհրդարաններ ունեցող մնացած երեք երկրները միատարր են: Ոչ **Լեհաստանի, ոչ Ռումինիայի, որ Չեխիայի** սահմանադրություններում չի ասվում, որ վերին պալատը տարածքային միավորների ներկայացուցչություն է (ի տարբերություն Ֆրանսիայի կամ Իտալիայի սահմանադրությունների): Դա վկայում է այն մասին, որ քաղաքական-տարածքային կառուցվածքի բարեփոխման պայմաններում խորհրդարանի վերին պալատը դիտվում է ավելի շուտ որպես լրացուցիչ սոցիալական ներկայացուցչություն, որը պարտադիր չէ, որ տարածքային լինի: Թեպետ Սահմանադրությունը չի սահմանում չեխական երկպալատությունը ո՛չ որպես տարածային և ո՛չ էլ որպես ազգային ներկայացուցչություն, որոշակի ընտրական իրավունքի համատեքստում այն կարող է դառնալ այդպիսին: Ինչպես ցույց է տալիս ընտրությունների փորձը այդ երկրներում, քաղաքական ուժերը դիտում են վերին պալատը որպես խորհրդարան մտնելու լրացուցիչ հնարավորություն, քանի որ ստորին պալատում տեղ գրավելու համար սովորաբար ծավալվում է շատ սուր պայքար: Ուշագրավ է, որ **Լեհաստանում և Ռումինիայում** երկու պալատներն էլ ընտրվում են միաժամանակ և ունեն լիազորությունների հավասար ժամկետ: Լեհական և չեխական սենատները թույլ վերին պալատներ են, հակառակը՝ ռումինական սենատը օրենքներ ընդունելիս և կառավարության հետ հարաբերություններում ստորին պալատի հետ հավասար դիրքերում է:

Ինչ վերաբերում է Արևելյան Եվրոպայի երկրների խորհրդարանների (պալատների) ներքին կազմակերպմանը, ապա բոլոր սահմանադրությունները հիշատակում են խորհրդարանի նախագահին, նրա տեղակալներին, մշտական ու ժամանակավոր կոմիտեներն ու հանձնաժողովները: Որոշ սահմանադրություններում նշվում են քարտուղարները (օրինակ՝ **Ալբանիայում, Հունգարիայում, Լատվիայում**): **Բոսնիա և Հերցեգովինայում** պալատի նախագահի և նրա տեղակալի պաշտոններում հաջորդականորեն իրար փոխանցում են և մեկ խորվաթ մեկ սերբ, մեկ բոսնիացի և մեկ խորվաթ (Սահմանադրության 4-րդ Հոդված): Քանի որ գերակայում է խորհրդարանական կառավարման ձևը, խորհրդարանի ղեկավարը հաճախ օժտվում է մի շարք կարևորագույն լիազորություններով, օրինակ՝ Նախագահին ժամանակավորապես փոխարինելու իրավունքով (փոխնախագահի պաշտոն գոյություն ունի միայն Բուլղարիայում): Սահմանադրություններում գործնականում ղեկավար կոլեգիալ մարմիններ չեն նշվում, բացառությամբ **Լատվիայի և Ռումինիայի** սահմանադրությունների: Այսպես, **Լատվիայի** Սահմանադրությունում նախատեսված է մշտապես գործող նախագահություն՝ կազմված նախագահից, նրա երկու գործընկերներից և քարտուղարից (Հոդված 16): Առաջին հայացքից նման մարմինը կարելի է համարել սոցիալիստական անցյալի մնացուկ, սակայն, Լատվիայի ներկայիս Սահմանադրությունն ընդունվել է դեռևս 1922 թ: **Ռումինիայի** Սահմանադրությունում Ֆրանսիայի օրինակով յուրաքանչյուր պալատում հիմնվում է մշտական բյուրո (Հոդված 61):

Սահմանադրությունները չեն սահմանափակում խորհրդարանական կոմիտեների և հանձնաժողովների թիվը: Երբեմն նշվում են նրանց գործառույթները: Օրինակ, **Սլովենիայի** Սահմանադրության համաձայն՝ կոմիտեները սահմանվում են որպես խորհրդարանի «նախաձեռնող և վերահսկող մարմիններ» (Հոդված 92): **Ռումինիայի** Սահմանադրությունում նշվում է, որ հանձնաժողովները ձևավորվում են ըստ յուրաքանչյուր պալատի քաղաքական կազմի (Հոդված 61): Ժամանակավոր (հատուկ) հանձնաժողովները ստեղծվում են որևէ հարց քննարկելու (ուսումնասիրելու) համար: **Մակեդոնիայի** Սահմանադրությունը սահմանում է, որ խորհրդարանում ստեղծվում է մշտական հետազոտական հանձնաժողով՝ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու համար, ինչպես նաև, ազգամիջյան հարաբե-

րությունների խորհուրդ (Հոդվածներ՝ 76, 78):

Արևելյան Եվրոպայի երկրների խորհրդարանական կառավարման կարգավիճակում կարելի է առանձնացնել հետևյալ **առանձնահատկությունները**.

Բոլոր սահմանադրություններում, բացի հունգարիայից և ռումինականից, նշված է խորհրդարանի անդամների ստույգ թվաքանակը: Մի շարք երկրներում պատգամավորներին ներկայացվող պահանջների մեջ առանձնանում է երկքաղաքացիություն ունենալու արգելքը (**Բուլղարիա, Լիտվա Ռումինիա**): Տարբեր կերպ է լուծվում պատգամավորական մանդատը և նախարարական պաշտոնը համատեղելու հարցը: Որոշ սահմանադրություններ արգելում են այդպիսի համատեղումը (**Բուլղարիա, Մակեդոնիա**), որոշներում ասվում է պատգամավորական մանդատը վայր դնելու մասին (**Սլովակիա, Էստոնիա**), սակայն սահմանադրությունների գերակշիռ մասը թույլատրում է այդ, ինչն առհասարակ բնորոշ է խորհրդարանական կառավարման ձևին:

Քննության առնվող բոլոր երկրներում մերժվում է **հրամայական մանդատը**, պատգամավորները հռչակվում են ամբողջ ժողովրդի ներկայացուցիչներ՝ ազատ ցանկացած մեկի ցուցումներից: Խորհրդականներն օժտված են անձեռնմխելիությամբ և ինդեմնիտետով (աշխատանքի դիմաց վարձատրություն): Հաճախ վեճեր են ծագում անձեռնմխելիության ժամկետի վերաբերյալ. օրինակ՝ **Սլովակիայում** այն հավասար է պատգամավորի լիազորությունների ժամկետին (Հոդված 78), իսկ **Չեխիայում**, եթե պալատը համաձայնություն չի տալիս խորհրդարանի անդամի քրեական հետապնդմանը, այն բացառվում է մեկընդմիջտ (Հոդված 27): Երկու դեպքում էլ պատգամավորը կարող է զրկվել մանդատից, եթե նա առանց հարգելի պատճառների բացակայում է խորհրդարանի նիստերից ավելի քան վեց ամիս (**Ալբանիայի** Սահմանադրության 71-րդ հոդված և **Մակեդոնիայի** Սահմանադրության 65-րդ Հոդված): Վերջապես, գրեթե բոլոր սահմանադրությունները նշում են խորհրդարանականների վարձատրության մասին:

Ինչ վերաբերում է խորհրդարանի աշխատանքի ընդհանուր կարգին, ապա անհրաժեշտ է նշել Արևելյան Եվրոպայի երկրների այնպիսի առանձնահատկություն, ինչպիսին որոշ երկրներում խորհրդարանների գործունեության մշտական բնույթն է (**Բուլղարիա, Մակեդոնիա, Սլովակիա, Չեխիա**): Օրինակ՝ համաձայն **Բուլղարիայի** Սահմանադրության 74 Հոդվածի՝ ժողովրդական ժողովը (խորհրդարանը) մշտապես գործող մարմին է, այն ինքն է սահմանում իր նիստերի ժամկետները: **Սլովակիայի** Սահմանադրության 82 Հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը (խորհրդարանը) մշտապես նստաշրջաններ է անցկացնում, այն կարող է իր որոշմամբ ընդհատել նստաշրջանը: Ազգային ժողովի նստաշրջանն ավարտվում է նրա լիազորությունների ավարտով կամ նրա արձակմամբ: Սակայն, փաստացի այդ խորհրդարանները քիչ բանով են տարբերվում այն երկրների խորհրդարաններից, որոնց սահմանադրություններում ամրագրվում են տարեկան երկու հերթական նստաշրջաններ: **Բոսնիա և Հերցեգովինայի** ու **Լեհաստանի** սահմանադրություններն առհասարակ շրջանցում են այդ հարցը: Երկապալատ խորհրդարաններում պալատներն աշխատում են առանձնաբար: Սահմանադրությունները մատնանշում են պալատների համատեղ նիստերի դեպքերը, դրանք ամենաշատը **Ռումինիայում** են, ամենաքիչը՝ **Չեխիայում**: **Լեհաստանում**, երբ պալատներն աշխատում են միասին, դրանք անվանվում են Ազգային ժողով և այնուամենայնիվ կապված է Նախագահի հետ: **Բոսնիա և Հերցեգովինայի** Սահմանադրությունը չի հիշատակում պալատների համատեղ նիստերի մասին:

Արևելյան Եվրոպայի երկրների սահմանադրությունները նախատեսում են **խորհրդարանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հնարավորություն**: Ինչպես և այլ

երկրներում, խորհրդարանը լուծարելու պատճառն առավել հաճախ կառավարություն ձևավորել չկարողանալն է: Պետք է նշել, որ վաղաժամկետ լուծարման համար անհրաժեշտ հիմքերը խստորեն սահմանված են սահմանադրությամբ և շատ սահմանափակ են: **Լատվիայում** Նախագահը կարող է լոկ նախաձեռնել խորհրդարանի լուծարումը, վերջնական որոշումը կայացվում է հանրաքվեի արդյունքներով, և եթե ընտրողները չեն աջակցում այդ նախաձեռնությանը, Նախագահը հրաժարական է տալիս (Հոդվածներ՝ 48, 50): Որոշ երկրներում հնարավոր է խորհրդարանի ինքնարձակումը (**Բոսնիա և Հերցեգովինա, Հունգարիա, Մակեդոնիա, Լեհաստան, Խորվաթիա**): Ըստ Մակեդոնիայի Սահմանադրության (Հոդված 63)՝ դա միակ միջոցն է վաղաժամկետ դադարեցնելու խորհրդարանի լիազորությունները: Երկպալատ խորհրդարաններից լուծարման ենթակա չեն **Չեխիայի Սենատն** ու **Բոսնիա և Հերցեգովինայի Ներկայացուցիչների պալատը**: **Լեհաստանում**, եթե Սեյմը դադարեցնում է աշխատանքը, նույնը անում է նաև Սենատը, **Ռումինիայում**՝ լուծարվում են երկու պալատներն էլ:

Արևելաեվրոպական երկրների սահմանադրությունները կարգավորում են որոշ հատուկ խորհրդարանական ընթացակարգեր, առաջին հերթին օրենսդրական գործընթացը և վերահսկման ընթացակարգերը: Եթե ընդգծենք առանձնահատկությունները, ապա պետք է նշենք, որ երկրների մեծ մասում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է սուբյեկտների բավականաչափ լայն խմբի, **այդ թվում և յուրաքանչյուր պատգամավորի**: Երկրների կեսում հնարավոր է ժողովրդական օրենսդրական նախաձեռնություն (օրինակ՝ **Ալբանիայում, Հունգարիայում, Լիտվայում, Լեհաստանում**): **Մակեդոնիայում** օրենսդրական նախաձեռնությամբ լիազորված անձին կարող է դիմել յուրաքանչյուր քաղաքացի, քաղաքացիների խումբ, հաստատություն կամ միավորում (Հոդված 71): Տարածքային միավորների մարմինները կարող են նախաձեռնել օրենք միայն **Չեխիայում**: Նախագահն օժտված է հետաձգվող վետոյի իրավունքով և օրենքներ հրապարակելու իրավունքով (պարտավորությամբ), նախքան դրանք ստորագրելը նա կարող է դիմել սահմանադրական վերահսկողության մարմին (**Լեհաստան, Հունգարիա, Ռումինիա, Խորվաթիա, Էստոնիա**): **Լատվիայում** Նախագահը կարող է առկախել օրենքի հոչակումը երկու ամսով և այն փոխելու վերաբերյալ հնարավոր է անցկացնել հանրաքվե (Հոդվածներ՝ 72-74): **Բոսնիա և Հերցեգովինայի** Սահմանադրության մեջ նախատեսված է յուրատեսակ ազգային վետո, քանի որ ցանկացած օրենք կարող է հայտարարվել «բոսնիացի», խորվաթ և սերբ ժողովուրդների կենսական շահերը վնասող» համապատասխանաբար՝ բոսնիացի, սերբ կամ խորվաթ պատգամավորների մեծամասնության կողմից ժողովուրդների պալատում (Հոդված 4):

Վերահսկիչ ընթացակարգերի մեջ, բացի նախկինում քննարկված քաղաքական և իրավաբանական պատասխանատվության ձևերից, հանդիպում են հարցեր և հարցապնդումներ կառավարության անդամներին, կայանում են քննչական հանձնաժողովներ: Հետաքրքիր է, որ շատ սահմանադրություններ օգտագործում են հենց «ինտերպելյացիա» (հարցապնդում) եզրույթը բայց ոչ միշտ են լիարժեքորեն ներկայացնում նշյալ ընթացակարգը, դրա արդյունքների վերաբերյալ քվեարկությամբ (բացառություն է **Լիտվայի** Սահմանադրության 61 Հոդվածը): Ինչ վերաբերում է խորհրդարանական հետաքննող հանձնաժողովներին, ապա միայն **Սլովենիայի** Սահմանադրությունն է օժտում դրանց «նույնատեսակ լիազորություններով, ինչ արդարադատության մարմինները» (դրա 93 Հոդվածը հիշեցնում է Իտալիայի Սահմանադրության 82 Հոդվածը): Այդպիսի հանձնաժողով ստեղծելու համար երկրների կեսում պետք է առկա լինի հանրային հետաքրքրություն գործի նկատմամբ:

Այսպիսով, արդարացվում է նշյալ երկրների պայմանական խումբ առանձնացնելը: Այդ երկրները վերապրել են համայնավարական կառավարման ժամանակաշրջանը և ներկա-

յումս հիմնովին բարեփոխում են հասարակական հարաբերությունների ամբողջ համակարգը՝ ներառյալ պետական իշխանության բարձրագույն մարմինների համակարգը: Ընդ որում՝ նրանք հենվում են սեփական մինչսոցիալիստական անցյալի և զարգացած ժողովրդավարական երկրների օրինակի վրա, ինչպես նաև հաշվի են առնում սահմանադրական զարգացման արդի համաշխարհային միտումները¹⁵:

Բարեփոխումների առանձնահատուկ նպատակն էր հաղթահարել սոցիալիստական վարչակարգի բացասական քաղաքական և իրավական գործելակերպը: Մասնավորապես՝ Արևելավերոպական երկրները ձգտում են վերաստեղծել խորհրդարանը որպես պետական իշխանության իրապես գործող ներկայացուցչական օրենսդիր մարմին: Ու թեև նրանց մեծ մասը ընտրել է կառավարման խառը ձևը՝ ժողովրդի կողմից ընտրվող պետության ղեկավարով, ինչը միանգամայն նպատակահարմար է զանգվածային ձևով քաղաքական և տնտեսական նոր համակարգի անցնելիս, սակայն, օրենքներ ընդունելու և կառավարություն ձևավորելու ու նրա պատասխանատվությունը սահմանելու վճռորոշ դերը վերապահվել է խորհրդարանին, որը արդի պատկերացումներին համապատասխան ձեռք է բերել լայն լիազորություններ՝ ներառյալ արտաքին քաղաքական համագործակցության ոլորտում:

Այդուհանդերձ, ժողովրդավարական իրավական պետություն կառուցելը Արևելյան Եվրոպայի երկրներում ուղեկցվում է մեծ բարդություններով, և այդ երկրները չխուսափեցին անհաջող փորձերից: Առաջին հերթին խոսքը նախկին հարավսլավական հանրապետությունների մասին է: Սերբիայում և խորվաթիայում համայնավարական վարչակազմի տապալումից շատ չանցած հաստատվեց ազգայնական առաջնորդների ավտորիտար կառավարում, որոնք ներքաշեցին այդ երկրները զինված ազգամիջյան կոնֆլիկտների մեջ տարածաշրջանում, ինչը հանգեցրեց միջազգային պատժամիջոցների, այդ թվում՝ այնպիսի արմատական միջոցների կիրառման, ինչպիսին 1999թ. ՆԱՏՕ-ի կողմից հարավսլավական տարածքը ռմբակոծելն էր: **Ալբանիայում և Մակեդոնիայում** ևս ծավալվեցին ներքին զինված հակամարտություններ: Բացի այդ, մակեդոնական իշխանությունները երկար տարիներ պայքար են ծավալել հանուն միջազգային ճանաչման, ինչին խոչընդոտում էր Հունաստանը՝ հանդես գալով «Մակեդոնիա» անվանումը օգտագործելու դեմ, որը համընկնում է նրա հյուսիսային մարզի պատմական անվանմանը¹⁶: Վերջապես **Բոսնիա և Հերցեգովինա** պետությունը բաժանված է երեք, «սահմանադրական» ժողովուրդների և փաստացի գտնվում է միջազգային ուղիղ կառավարման ներքո: Քաղաքական իրավիճակը ավելի է սրվում տնտեսական լրջագույն խնդիրների պատճառով:

Մյուս կողմից, բալկանյան բոլոր երկրներում հաստատվել է ժողովրդավարական իրավակարգ, որն ապահովում է իշխանության փոփոխությունը ընտրությունների արդյունքների հիման վրա և խոչընդոտում անձի իշխանության կենտրոնացումն ու ավտորիտարիզմի վերածնունդը: Այսօրվա դրությամբ տարածաշրջանի երկրներում բազմակուսակցական մրցակցային խորհրդարանական ընտրություններ տեղի են ունեցել բազմիցս, դրանց սահմանադրական ժամկետները հիմնականում պահպանվել են: Այնուհանդերձ, հետսոցիալիստական զարգացման ժամանակաշրջանի միջին հաշվով հինգ խորհրդարանական ընտրություններին բաժին է ընկնում կառավարությունների 8-10 փոփոխություն, իսկ կառավարությունների գե-

¹⁵ Տե՛ս *Мюллер К.*, «Страны транзита»: Пути развития восточноевропейский трансформации // Восточная Европа в начале 16 века: Сб. обзоров и реф. / ПАН ИНИОН. М., 2004. с. 12.

¹⁶ Տե՛ս *Гуськова Е.Ю.*, Вводная статья к Конституции Македонии// Конституции государств Европы. Под общ. ред. Л.А. Окуцькова.-М., Иск-во НОРМА, 2001, с. 429.

րակշիռ մասը եղել է կոալիցիոն բնույթի¹⁷:

Արևելաեվրոպական առավել բարեկեցիկ երկրների թվին են դասվում այսպես կոչված «Վիշեգրադյան քառյակի» երկրները, այսինքն՝ **Հունգարիան, Լեհաստանը, Սլովենիան և Չեխիան**¹⁸: Իրենց քաղաքական-տնտեսական մակարդակով այդ երկրներին մոտ են **Բուլղարիան և Ռումինիան**, ինչպես նաև **Սլովենիան**: Սակայն այդ երկրներում էլ բազմաթիվ են հիմնախնդիրները: Օրինակ՝ հետազոտողները **Չեխիայում** առանձնացնում են այնպիսի բացասական երևույթներ՝ ինչպիսին են ուռճացված կուսակցական համակարգը, Նախագահի ձգտումը ինքնուրույնության՝ շրջանցելով սահմանադրական լիազորությունները, քաղաքական կյանքի մենաշնորհումը քաղաքական ուժերի նեղ շրջանակի կողմից և այլն: **Հունգարիան** իր հերթին խոշոր կառավարական ճգնաժամ ապրեց 2006թ. դեկտեմբերին: Դիտորդների խոսքերով՝ «տպավորություն է ստեղծվում, որ 1989թվականից ի վեր ստեղծվող ժողովրդավարական քաղաքական համակարգը, չնակած իր կայունությանը, չի հենվում լայն հասարակական համաձայնության վրա»¹⁹: Ինչ վերաբերում է բալթյան հանրապետություններին, ապա նրանց համար ամենահրատապ քաղաքական-իրավական հիմնախնդիրներից մեկը մնում է ռուսախոս բնակչության իրավունքների ապահովումը:

Վերը նշված պետությունների խորհրդարանների կարգավիճակին վերաբերող հիմնահարցերի առումով հեղինակի գիտական դիրքորոշումն այն է, որ Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի մեջ մտնող երկրները պայմանականորեն պետք է բաժանել երկու խմբի: Քանզի, այդ երկրները վերապրել են համայնավարական կառավարման ժամանակաշրջանը և ներկայումս հիմնովին բարեփոխում են հասարակական հարաբերությունների ամբողջ համակարգը՝ ներառյալ պետական իշխանության բարձրագույն մարմինների համակարգը: Ընդ որում՝ նրանք հենվում են սեփական մինչսոցիալիստական անցյալի և զարգացած ժողովրդավարական երկրների օրինակի վրա, ինչպես նաև հաշվի են առնում սահմանադրական զարգացման արդի համաշխարհային միտումները:

Եզրակացություն

Քննության առարկա բոլոր խորհրդարանները և երկպալատ խորհրդարանների բոլոր պալատները (բացի Բոսնիա և Հերցեգովինայի և Սլովենիայի վերին պալատներից) ընտրվում են ուղիղ ընտրություններով: Ավելին, նրանց լիազորությունների ժամկետը չորս տարի է (այս դեպքում բացառություն են Սլովենիայի և Չեխիայի վերին պալատները): Խորհրդարանի ուղիղ ընտրակարգն ու լիազորությունների բավականին կարճ ժամկետը համարժեքորեն արտացոլում են դրանց կազմում հասարակության սոցիալ-քաղաքական կառուցվածքի փոփոխությունները: Միայն հինգ սահմանադրություններում է հիշատակվում ընտրական համակարգի տեսակը, համամասնական համակարգը՝ Լատվիայում (ստորին պալատը), Չեխիայում (ստորին պալատը), Էստոնիայում, մեծամասնական համակարգը՝ Չեխիայում (վերին պալատ), մեծամասնական-համամասնականը՝ Ալբանիայում: Հետազոտության արդյունքում հեղինակի կողմից արված եզրահանգումն այն է, որ նույնիսկ սահմանադրորեն ամրագրված լինելն էլ չի երաշխավորում վերոնշյալ երկրները ընտրական օրենսդրության բազմաթիվ փոփոխություններից: Դա կարելի է համարել բոլոր անցումային ժողովրդավարությունների բնորոշ

¹⁷ Юго восточная Европа в эпоху кардинальных перемен/ Под. ред. А.А. Языковой. -М., «Весь мир», 2007, с. 222.

¹⁸ Վիշեգրադյան խումբը ստեղծվել է 1991թ. փետրվարի 15-ին, երբ Հունգարիայի, Լեհաստանի և Չեխոսլովակիայի ղեկավարները հունգարական Վիշեգրադ քաղաքում ստորագրեցին համագործակցության հռչակագիր: Չեխիայի և Սլովակիայի բաժանումից հետո երկրների խումբը սկսեց կոչվել «Վիշեգրադյան քառյակ»:

¹⁹ Sándor Á. A. Demokrácia vagy utca. Hízelő stabilitás Magyarországon //Nacionálisizmus és populizmus a Kelet-Európában: Sz. tudományos munkák / PANINIION. M., 2007. s. 53.

գիծը: Ինչ վերաբերում է ընտրական համակարգի տեսակին, որն ավելի հաճախ է կիրառվում խորհրդարան (պալատներ) ձևավորելիս, ապա հեղինակի կարծիքով, դա համամասնական ընտրակարգն է:

Ամփոփագիր: Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի մեջ մտնող երկրները սույն հոդվածում պայմանականորեն բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբում ընդգրկված են այն երկրները, որոնք նախկինում միութենական հանրապետություններ էին ԽՍՀՄ կազմում, իսկ վերջինիս անկումից հետո միավորվեցին Անկախ Պետությունների Համագործակցության մեջ: Դրանք են՝ Ռուսաստանը, Ուկրաինան, Բելառուսը, Մոլդովան, ինչպես նաև Եվրոպայի աշխարհագրական սահմաններից դուրս գտնվող հարավկովկասյան երկրները՝ Հայաստանը, Վրաստանը (այն դուրս եկավ ԱԴՀ կազմից 2008 թ.) և Ադրբեյջանը: Եվրոպայի խորհրդի կազմում է նաև Ղազախստանը, որի տարածքի չնչին մասն է միայն Եվրոպայի աշխարհագրական տիրույթում:

Երկրորդ խումբը ձևավորում են Արևելյան Եվրոպայի այնպիսի երկրներ, ինչպիսիք են՝ Ալբանիան, Բուլղարիան, Հունգարիան, Լեհաստանը, Ռումինիան, Չեխիան, Սլովակիան և Հարավսլավիայի տրոհումից հետո առաջացած երկրներ՝ Բոսնիա և Հերցեգովինան, Մակեդոնիան, Սերբիան, (2008 թ. Սերբիայի կազմից դուրս գալու և անկախություն հռչակելու մասին հայտարարեց Կոսովոն, որը դեռևս մասամբ ճանաչված երկիր է), Սլովենիան, Խորվաթիան, Մոնտենեգրոն (նախկին Չեռնոգորիան): Այս խմբի մեջ, անտարակույս, մտնում են նաև Լիտվան, Լատվիան և Էստոնիան:

Հոդվածի հեղինակի կարծիքով՝ արդարացվում է նշյալ երկրների պայմանական խումբ առանձնացնելը: Այդ երկրները վերապրել են համայնավարական կառավարման ժամանակաշրջանը և ներկայումս հիմնովին բարեփոխում են հասարակական հարաբերությունների ամբողջ համակարգը՝ ներառյալ պետական իշխանության բարձրագույն մարմինների համակարգը: Ընդ որում՝ նրանք հենվում են սեփական մինչսոցիալիստական անցյալի և զարգացած ժողովրդավարական երկրների օրինակի վրա, ինչպես նաև հաշվի են առնում սահմանադրական զարգացման արդի համաշխարհային միտումները:

Հոդվածի հեղինակը գտնում է նաև, որ բարեփոխումների առանձնահատուկ նպատակն էր հաղթահարել սոցիալիստական վարչակարգի բացասական քաղաքական և իրավական գործելակերպը: Մասնավորապես՝ Արևելաեվրոպական երկրները ձգտում են վերաստեղծել խորհրդարանը որպես պետական իշխանության իրապես գործող ներկայացուցչական օրենսդիր մարմին: Ու թեև նրանք մեծ մասը ընտրել է կառավարման խառը ձևը՝ սակայն, օրենքներ ընդունելու և կառավարություն ձևավորելու ու նրա պատասխանատվությունը սահմանելու վճռորոշ դերը վերապահվել է խորհրդարանին, որը արդի պատկերացումներին համապատասխան ձեռք է բերել լայն լիազորություններ՝ ներառյալ արտաքին քաղաքական համագործակցության ոլորտում:

Annotation. The countries of the Central and Eastern European region are conventionally divided into two groups in this article. The first group includes those countries that were formerly part of the USSR, and after the collapse of the latter, united in the Commonwealth of Independent States. These are Russia, Ukraine, Belarus, Moldova, as well as the South Caucasus countries outside the geographical borders of Europe - Armenia, Georgia (it left the CIS in 2008) and Azerbaijan. Kazakhstan is also a member of the Council of Europe, although only a small part of its territory is within the geographical area of Europe.

The second group is formed by such Eastern European countries as Albania, Bulgaria, Hungary, Poland, Romania, the Czech Republic, Slovakia and the countries that emerged after the breakup of Yugoslavia: Bosnia and Herzegovina, Macedonia, Serbia (in 2008 Kosovo declared its secession from Serbia and declaration of independence and is still a partially recognized country), Slovenia, Croatia, Montenegro. This group, of course, also includes Lithuania, Latvia, and Estonia.

According to the author of the article, it is justified to single out a conditional group of the mentioned countries. These countries have survived the period of communist rule and are currently fundamentally reforming the entire system of public relations, including the system of the supreme bodies of state power. At the same time, they rely on their own pre-socialist past and the example of developed democratic countries, as well as take into consideration modern global

trends in constitutional development.

The author of the article also believes that the specific goal of the reforms was to overcome the negative political and legal practices of the socialist regime. In particular, the Eastern European countries are striving to recreate the parliament as a truly functioning representative legislative body of state power. And although most of them have chosen a mixed form of government, the decisive role of adopting laws and forming a government and defining its responsibilities has been assigned to the parliament, which, in accordance with modern ideas, has acquired broad powers, including in the field of foreign political cooperation.

Аннотация. Страны региона Центральной и Восточной Европы в данной статье условно разделены на две группы. К первой группе относятся страны, ранее входившие в состав СССР, а после его распада объединившиеся в Содружество Независимых Государств. Это Россия, Украина, Беларусь, Молдова, а также страны Южного Кавказа за пределами географических границ Европы – Армения, Грузия (покинула СНГ в 2008 г.) и Азербайджан. Казахстан также является членом Совета Европы, хотя лишь небольшая часть его территории находится в географическом пространстве Европы.

Вторую группу образуют такие страны Восточной Европы, как Албания, Болгария, Венгрия, Польша, Румыния, Чехия, Словакия и страны, образовавшиеся после распада Югославии: Босния и Герцеговина, Македония, Сербия (в 2008 г. Косово объявило о своем отделении от Сербии и провозглашении независимости, однако до сих пор является частично признанным государством), Словения, Хорватия, Монтенегро (бывшая Черногория). В эту группу, конечно же, входят также Литва, Латвия и Эстония.

По мнению автора статьи, обосновано выделение условной группы указанных стран. Эти страны пережили период коммунистического правления и в настоящее время кардинально реформируют всю систему общественных отношений, включая систему высших органов государственной власти. При этом они опираются на собственное досоциалистическое прошлое и пример развитых демократических стран, а также учитывают современные мировые тенденции конституционного развития.

Автор статьи также считает, что конкретной целью реформ было преодоление негативных политико-правовых практик социалистического режима. В частности, страны Восточной Европы стремятся воссоздать парламент как реально функционирующий представительный законодательный орган государственной власти. И хотя большинство из них выбрали смешанную форму правления, решающая роль в принятии законов, формировании правительства и определении его обязанностей отведена парламенту, который в соответствии с современными представлениями приобрел широкие полномочия, в том числе в сфере внешнеполитического сотрудничества.

Բանալի բառեր - պետություն, Սահմանադրություն, խորհրդարան, պառլամենտարիզմ, քաղաքական համակարգ, ժողովրդավարություն, կոսակցական համակարգ, սահմանադրական վերահսկողություն, պետական բյուջե, պարլամենտականություն:

Keywords: state, Constitution, parliament, parliamentarism, political system, democracy, party system, constitutional control, state budget, members of parliament.

Ключевые слова: государство, Конституция, парламент, парламентаризм, политическая система, демократия, партийная система, конституционный контроль, государственный бюджет, депутаты.

Օգտագործված գրականության ցանկ

1. Всемирная история: Канун Первой мировой войны/ А.Н. Бадак, И.Е. Войнич, Н. М. Волчек и др., М., АСТ, 2000. с. 130. Воцелка К., История Австрии. Культура, общество, политика. М., 2007.
2. Страшун Б.А., Конституционное перемены в Восточной Европе 1989-1990. М., 1991.
3. Маклаков В.В., Введение // Конституции зарубежных государств. Великобритания, Франция, Германия,

- Италия, Европейский союз, США, Япония, Индия: Учеб пособие. М., 2007.
4. Светлорусова Л.М., Развитие парламентаризма в Болгарии (Обзор) // Процессы демократизации в Восточной Европе: Ожидания и реальность: Сб.обзоров и реф./РАИ ИНИОН>Отв. редактор Игрицкий Ю. И., М., 2002.
 5. Mc Cormik J., Understanding the European Union: a concise introduction 2002.
 6. Штадтмюллер Е., Проблемы и перспективы развития Европейского союза. Польша и ЕС//Европейский союз на рубеже веков /ПАН.ИНИОН. М., 2000.
 7. Мойсенко М.Г., Вводная статья к Конституции Румынии // Конституции государств Европы. Под. общ. ред. Л.А. Окункова. М., Изд-во НОРМА. 2001.
 8. Шрам В.П., Вводная статья к Конституции Боснии и Герцоговины// Конституции государств Европы Под. общ. ред. Л.А. Окункова. М., Изд-во НОРМА. 2001.
 9. Трещетенкова Н.Ю., Вводная статья к Конституции Литвы // Конституции государств Европы. Под. общ. ред. Л.А. Окунькова. М., Изд-во НОРМА. 2001.
 10. Тимошенко И.Г., Конституционная регламентация бюджетного процесса в зарубежных государствах // Очерки конституционного права иностранных государств: Учебное и научно-практическое пособие/Отв. ред. Д. А Ковачев. М., 1999.
 11. Шамбек Г., К вопросу о значении двухпалатной парламентской системы//КПВО, 2003.
 12. Покладок Е., Экономический и социальный своет Франции//Современная Европа, 2005.
 13. Мюллер К., «Страны транзита»: Пути развития восточноевропейский трансформации //Восточная Европа в начале 16 века: Сб. обзоров и реф. / ПАН ИНИОН. М., 2004.
 14. Гуськова Е.Ю., Вводная статья к Конституции Македонии// Конституции государств Европы. Под общ. ред. Л.А. Окунькова. -М., Исд-во НОРМА, 2001.
 15. Аан фон Т., Демократия или улица. Хрупкая стабильность в Венгрии //Национализм и популизм в Восточной Европе: Сб научных трудов / ПАН ИНИОН. М., 2007.
 16. Покладок Е., Экономический и социальный совет Франции//Современная Европа, 2005.

Մանուկյան Մ. - Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի Հանրային պաշտպանի գրասենյակի մոնիտորինգի պատասխանատու, Երևանի «Գլաձոր» համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, էլիասցե՝ martin_manukyan_1955@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն 27.01.2025 թ., տրվել է գրախոսության 27.01.2025 թ., երաշխավորվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Սաֆարյանի կողմից, ընդունվել է տպագրության 22.04.2025 թ.: